

ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱՒ ՌՈՒՍՔԱՎԵԼՈՒ ԱՆՎԱՆ ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ե-ՐԴ ՀԱՏՈՐԸ

1950 թվականին Թբիլիսիում լույս է տեսել Վրացական ՍՍՌԻ ԳԱ-ի Ռուսթավելու անվան վրաց գրականության պատմության գիտական աշխատությունների 6-րդ հատորը, բաղկացած XXXVIII + 300 էջից:

Ժողովածուն սկսվում է ընկեր Ստալինի «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ», «Լեզվաբանության մի քանի հարցերի շուրջը» և «Պատասխան ընկերներին» հանճարեղ աշխատություններով:

Ժողովածուն պարունակում է մի շարք ուշագրավ հոդվածներ վրացական գրականության, ժողովրդական բանահյուսության և այլ հարցերի մասին:

Արժեքավոր հոդված է Լ. Ասատիանիի «Բ. Ստալինը և վրաց գեղուցիոն պոեզիան» 1901—1907 թ. թ. ուսումնասիրությունը:

Հեղինակը մեծ չափով ոգտագործել է 1901—1907 թ. թ. բուլղակյան մամուլը, դիտավորապես «Բրձուխ»-ն, որի առաջին համարներում նկարագրված են ընկեր Ստալինի մասնակցությամբ տեղի ունեցած մայիսմեկյան ցույցը և դրան նախորդող դեպքերը: Բերված է «Մարսելյոզը» վրաց հայտնի բանաստեղծ Իրոդիոն Եվդոզիլու թարգմանությամբ:

Նույն Եվդոզիլու թարգմանությամբ Մ. Գորկու «Հատակում» պիեսից բերված է «Արևը ծագում է և մայր է մտնում» բանաստեղծությունը, որը հատկապես ժողովրդականություն էր վայելում այդ տարիներին:

Ուշագրավ է Ե. Ռադիանիի— «Մարքս-լենինյան գրականագիտություն» հոդվածը, որտեղ հեղինակը խոսում է գրականության՝ որպես վերնաշենքի առանձնահատկությունների մասին:

Կ. Սիխարուլիձեն իր «Ժողովրդական պոեզիան կոլխոզային գյուղերում» հոդվածում քննություն է առել Կվարելու շրջանի (Կախեթի) ժողովրդական ասույթները, ինչպես հին, այնպես էլ ժամանակակից ֆուլկլորային նմուշները, որոնց մեջ երգվում է Սովետական իշխանության հաստատումը Վրաստանում, կոլեկտիվ տնտեսությունը, արդյունաբերության արագ աճը, մեծ առաջնորդների՝ Լենինի և Ստալինի գործերը: Կան նաև բազմաթիվ ոտանավորներ Հայրենական պատերազմի մասին:

Ել. Վիրսալաձեի հոդվածի թեման է «Հայրենական Մեծ պատերազմի արտացոլումը ֆուլկլորում», որտեղ հեղինակը քննություն է առնում ֆուլկլորային այն երկերը, որոնք ստեղծվել են Հայրենական պատերազմի տարիներին, կամ արտացոլում են այդ պատերազմը:

Ժողովածուի ուշագրավ հոդվածներից են Ալ. Բարամիձեի «Վեփիսիս տղաոսանի-ի տիպերի մասին», «Վեփիսիս տղաոսանի-ի նախերգանքի մի տան առթիվ» և «Երկու արեգակ՝ «Վեփիսիս տղաոսանի»-ում ուսումնասիրությունները:

Առաջին հոդվածի մեջ հեղինակը քննություն է առնում «Վագրենավոր»-ի տիպերը, ենթարկելով դրանք առանձին խմբավորման— 1) իրական և կոնկրետ գեղարվեստական պորտրետներ, 2) երևակայական, մտացածին կերպարներ, և 3) մտածված, կենտրոնացված կերպարներ:

Երկրորդ հոդվածում հեղինակը ցույց է տալիս, որ Ռուսթավելին բանաստեղծների յուրաքանչյուր կարգին, պոեզիայի յուրաքանչյուր ժանրին մի ամբողջ տուն է հատկացնում իր երկի առաջաբանում: Այդ երեւում է առաջաբանի 15-րդ և 16-րդ տներին:

Երրորդ հոդվածում, հեղինակը ուսումնասիրելով Ռուսթավելու բանաստեղծական ոճի առանձնահատկությունները, պնդում է, որ բանաստեղծն իր հերոսների փոխհարաբերությունները ցույց է տալիս բարդ փոխհարաբերությունների միջոցով: Երկու, երեք, չորս, արեգակների և լուսինների երևալը Ռուսթավելին իմաստավորում է մարդկային փոխհարաբերությունների անալոգիայով:

Ժողովածուում զետեղված է Ա. Գաշելրլաձեի «Վրացական ուսուցիչի պատմության շուրջը» հոդվածը, որտեղ հեղինակը քննության է առնում գրող Լավրենտի Արղազանիի կյանքն ու ստեղծագործությունը, նրա «Սոլումոն Իսակիչ Մեջգանուաշվիլի» պիեսը և ուրիշ գործեր, որոնց մեջ հարազատորեն նկարագրված է քաղաքային խավերի կենցաղը:

Ժողովածուն պարունակում է նաև Գր. Խերխուլիձեի «Գ. Լեոնիձեի պոեզիան», Միխ. Զիկովանիի «19-րդ դարու ժող. բանաստեղծության ուսումնասիրության պրոբլեմը» հոդվածները:

Ուշագրավ է Թորն. Ճղոնիայի «Ֆրագմենտներ Վախթանգ 6-րդի երկերից» հոդվածը, որտեղ հեղինակը հայտնում է, որ մոտ անցյալում գտնված «Դուշակությունների գիրք» ձեռագրի առաջին շորս էջը, ինչպես և վերջին էջերը գրված են Վախթանգ 6-րդի սեփական ձեռքով:

Ըստ այդ հոդվածների էլ կարելի է խոսել թագավոր պոետի ստեղծագործության թնույթի մասին: Նրա ոտանավորների հայտնի տեքստը, որ զետեղված է երկերի ժողովածուի մեջ, դեռևս նրա կենդանության օրոք կազմվել է նրա ոտանավորների առանձին կտորներից:

Ժողովածուի վերջում տպագրված է Ալ. Բարամիձեի գրախոսությունը Փ. Բեգիաշվիլու «Հինգերորդ և վեցերորդ դարերի վրացական գրականության պատմությունը» գրքի մասին:

Ի. Կ.